ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՇԱՂԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

«28» դեկտեմբերի 2015թ
№ 56

ՀՀ Շիրակի մարզ, գյուղ Շաղիկ

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ՝
Ֆ.ՑՈԼԱԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ցոլակյան

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 8-րդ կետի դրույթի համաձայն՝ կից ներկայացվում են ՀՀ Շիրակի մարզի Շաղիկի համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբեր 21-ի թիվ 9-Ն, 10-Ա, 11-Ա, 12-Ա, և 13-Ն որոշումները:

Առդիր՝ 12 թերթ:

Հարգանքներով՝

Շաղիկի համայնքի ղեկավար *Ա.Բաղեյան*

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
Մուտք թիվ 11942-15
28. 12 15թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՇԱՂԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 9-Ն

«21» դեկտեմբերի 2015 թվական ՀՀ Շիրակի մարզ, գյուղ Շաղիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՇԱՂԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 03-Ի ԹԻՎ 18-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 10-րդ և 11-րդ հոդվածների, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետի դրույթներով, համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Շաղիկ համայնքի վարչական տարածքում 2016 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Շաղիկ համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 03-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Շաղիկ համայնքի վարչական տարածքում 2015 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու և համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 25-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 18-Ն որոշումը:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում 2016 թվականի հունվարի 1-ից:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

Թ.ԽԱՉԱՏՐՅԱՆ՝ կողմ _____

Ա.ՎԼԱՍՅԱՆ՝ կողմ _____

Ռ.ԲԱԴԵՅԱՆ՝ կողմ _____

Դ.ՍԱՆԹՈՅԱՆ՝ կողմ _____

Շաղիկի համայնքի ղեկավար՝ ***Ա.ԲԱԴԵՅԱՆ***

«21» դեկտեմբերի 2015թ.

գ. Շաղիկ

ՀԱՎԵԼՎԱԾ

Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Շաղիկի համայնքի
ավագանու 2015 թվականի դեկտեմբերի
21-ի թիվ 9-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՇԱՂԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Տեղական տուրքերի դրույքաչափեր

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

հիմնական օբյեկտների համար՝

ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ **2000 /երկու հազար/ դրամ**

բ) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ **3000 /երեք հազար/ դրամ**

բբ) 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ **5000 /հինգ հազար/ դրամ**

բգ) 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ **10000 /տաս հազար/ դրամ**

բդ) 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ **10000 /տաս հազար/ դրամ**

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ **700 /յոթ հարյուր/ դրամ**

դ) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ **1000 /մեկ հազար/ դրամ**

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ **700 /յոթ հարյուր/ դրամ**

բ) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ

թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

գ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է. **1000 /մեկ հազար/ դրամ**

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ **1000 /մեկ հազար/ դրամ**

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ **1600 /մեկ հազար վեց հարյուր/ դրամ**

5. Համայնքի տարածքում՝

ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝ մեկ քառակուսի մետրի համար **300 /երեք հարյուր/ դրամ**

բ) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է **50000 /հիսուն հազար/ դրամ**

գ) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է **10000 /տաս հազար/ դրամ**

գա) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ **3000 /երեք հազար/ դրամ**

ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ **500 /հինգ հարյուր/ դրամ**

դ) Համայնքային սեփականությունը հանդիսացող ընդհանուր օգտագործման փողոցներում կազմակերպված վճարովի ավտոկայանատեղերում ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա կցորդը կայանելու համար տեղական տուրքը սահմանվում է.

դա) յուրաքանչյուր մեկ ժամվա համար՝ **200 /երկու հարյուր/ դրամ**

դբ) յուրաքանչյուր մեկ օրվա համար՝ **2000 /երկու հազար/ դրամ**

դգ) մեկ շաբաթվա համար՝ **4000 /չորս հազար/ դրամ**

դդ) մեկ ամսվա համար՝ **20000 /քսան հազար/ դրամ**

դե) մեկ տարվա համար՝ **80000 /ութսուն հազար/ դրամ**

5[1] Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր տարվա համար **50000 /հիսուն հազար/ դրամ**

6. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

ա) առևտրի օբյեկտների համար՝ **30000 /երեսուն հազար/ դրամ**

բ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ **80000 /ութսուն հազար/ դրամ**

գ) բաղնիքների (սաունաների) համար՝ **300000 /երեք հարյուր հազար/ դրամ**

դ) խաղատների կազմակերպման համար՝ **700000 /յոթ հարյուր հազար/ դրամ**

ե) շահումով խաղերի կազմակերպման համար՝ **300000 /երեք հարյուր հազար/ դրամ**

զ) վիճակախաղերի կազմակերպման համար՝ **130000 /մեկ հարյուր երեսուն հազար/ դրամ**

7. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ **1500 /մեկ հազար հինգ հարյուր/դրամ**

բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ **2600 /երկու հազար վեց հարյուր/ դրամ**

գ) այլ արտաքին գովազդի համար՝ **1000 /մեկ հազար/ դրամ**

դ) դատարկ գովազդային վահանակների համար՝ **700 /յոթ հարյուր/ դրամ**

8. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է **3000 /երեք հազար/ դրամ**

Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է **70000 /յոթանասուն հազար/ դրամ**

9. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է **8000 /ութ հազար/ դրամ**

9.1. Համայնքի տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և (կամ) մատուցելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է **50000 /հիսուն հազար/ դրամ**

10. Համայնքի տարածքում մասնավոր գերեզմանատան շահագործման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր տարվա համար՝

ա) 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **2500000 /երկու միլիոն հինգ հարյուր հազար/ դրամ**

բ) 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **5000000 /հինգ միլիոն/ դրամ**

գ) 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **7000000 /յոթ միլիոն/ դրամ**

դ) 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **10000000 /տաս միլիոն/ դրամ**

Տեղական վճարների դրույքաչափեր

ա) Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտական ակտի ձևակերպման համար, ինչպես նաև շահագործման թույլտվություն տրամադրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար. **5000 /հինգ հազար/ դրամ**

բ) Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար. **1000 /մեկ հազար/ դրամ**

գ) Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցներից վճար. **5000 /հինգ հազար/ դրամ**

դ) Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աղբահանությունը կազմակերպելու համար՝ աղբահանության վճարը սահմանվում է.

կենցաղային աղբի համար՝

դա) ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար յուրաքանչյուր ամիս՝ **100 /մեկ հարյուր/ դրամ**

ե) Շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրամադրվող թույլտվության վճար.

ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝

եա) ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ **2000 /երկու հազար/ դրամ**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՏԱԿ ԲԱԴԵՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՇԱՂԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 10-Ա

«21» դեկտեմբերի 2015 թվական ՀՀ Շիրակի մարզ, գյուղ Շաղիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՇԱՂԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի դրույթով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Շաղիկի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Շաղիկ համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը՝ համաձայն հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

Թ.ԽԱՉԱՏՐՅԱՆ՝ կողմ ----------

Ա.ՎԼԱՍՅԱՆ՝ կողմ ----------

Ռ.ԲԱԴԵՅԱՆ՝ կողմ ----------

Դ.ՍԱՆԹՈՅԱՆ՝ կողմ ----------

Շաղիկի համայնքի ղեկավար՝ ***Ա.ԲԱԴԵՅԱՆ***

«21» դեկտեմբերի 2015թ.
գ. Շաղիկ

ՀԱՎԵԼՎԱԾ
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Շաղիկի համայնքի
ավագանու 2015 թվականի դեկտեմբերի
21 -ի թիվ 10-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՇԱՂԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

№	Անվանումը	Քանակը	Գումարը	Տեխ. վիճակը
1	Համակարգիչ	1	125000	Բավարար
2	Մոնիտոր	1	40000	Բավարար
3	Պրոցեսոր	1	130500	Բավարար
4	Տպիչ սարք	1	70000	Բավարար
5	Գրասեղան	2	8000	Բավարար
6	Երկաթյա պահարան	1	5000	Բավարար
7	Աթոռներ	6	12000	Բավարար

Շաղիկի համայնքի ղեկավար՝ *Ա.ԲԱԴԵՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՇԱՂԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 11-Ա

«21» դեկտեմբերի 2015 թվական ՀՀ Շիրակի մարզ, գյուղ Շաղիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՇԱՂԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 03 -Ի ԹԻՎ 16-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, 27-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետի դրույթներով, համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Շաղիկ համայնքի ղեկավարի 2016 թվականի պաշտոնային դրույքաչափը սահմանել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ 15,42%-ի չափով՝ 102000 (մեկ հարյուր երկու հազար) դրամ, բարձր լեռնային հավելում՝ 8000 (ութ հազար) դրամ, ընդամենը՝ 110000 (մեկ հարյուր տաս հազար) դրամ:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Շաղիկ համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 03-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Շաղիկ համայնքի ղեկավարի 2015 թվականի վարձատրության չափը սահմանելու և համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 23-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 16-Ա որոշումը:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում 2016 թվականի հունվարի 1-ից:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

Թ.ԽԱՉԱՏՐՅԱՆ՝ կողմ ----------

Ա.ՎԼԱՍՅԱՆ՝ կողմ ----------

Ռ.ԲԱԴԵՅԱՆ՝ կողմ ----------

Դ.ՍԱՆԹՈՅԱՆ՝ կողմ ----------

Շաղիկի համայնքի ղեկավար՝ ***Ա.ԲԱԴԵՅԱՆ***

«21» դեկտեմբերի 2015թ.

գ. Շաղիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՇԱՂԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 12-Ա

«21» դեկտեմբերի 2015 թվական

ՀՀ Շիրակի մարզ, գյուղ Շաղիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՇԱՂԻԿԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 03-Ի ԹԻՎ 17-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի, 31-րդ հոդվածի 4-րդ մասի, «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի, 1-ին կետի «բ» ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 55-Ա հրամանը, համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Շաղիկի գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների քանակը՝ 3:
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Շաղիկի գյուղապետարանի աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Շաղիկ համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 03-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Շաղիկի գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների 2015 թվականի քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 24-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 17-Ա որոշումը:
4. Որոշումն ուժի մեջ է մտնում 2016 թվականի հունվարի 1-ից:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

Թ.ԽԱՉԱՏՐՅԱՆ՝ կողմ ----------

Ա.ՎԼԱՍՅԱՆ՝ կողմ ----------

Ռ.ԲԱԴԵՅԱՆ՝ կողմ ----------

Դ.ՍԱՆԹՈՅԱՆ՝ կողմ ----------

Շաղիկի համայնքի ղեկավար՝ ***Ա.ԲԱԴԵՅԱՆ***

«21» դեկտեմբերի 2015թ.

գ. Շաղիկ

ՀԱՎԵԼՎԱԾ
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Շաղիկի համայնքի
ավագանու 2015 թվականի դեկտեմբերի
21 -ի թիվ 12-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՇԱՂԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Հ/հ	Պաշտոնի անվանումը	Հաստիքի քանակը	Պաշտոնային դրույքաչափը (դրամ)	Պաշտոնային դրույքաչափի տոկոսաչափը՝ համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ (%)	Սահման-ված դրույքը	Սահմանված դրույքաչափը (դրամ)	Բարձր լեռնային հավելում (դրամ)	Ընդամենը (դրամ)
Համայնքային ծառայության պաշտոններ								
1	Համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար	1	80000	78.43	1	80000	8000	88000
2	Առաջատար մասնագետ	1	79000	77.45	1	79000	8000	87000
Տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմ								
3	Հարկային գործակալ-օպերատոր	1	78000	76.47	1	78000	8000	86000
Ընդամենը		3	237000	-	3	237000	24000	261000

Շաղիկի համայնքի ղեկավար՝ ***Ա.ԲԱԴԵՅԱՆ***

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՇԱՂԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 13 -Ն

«21» դեկտեմբերի 2015 թվական ՀՀ Շիրակի մարզ, գյուղ Շաղիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՇԱՂԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Շաղիկի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Շաղիկի համայնքի 2016 թվականի բյուջեն՝ համաձայն հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

Թ.ԽԱՉԱՏՐՅԱՆ՝ կողմ ----------

Ա.ՎԼԱՍՅԱՆ՝ կողմ ----------

Ռ.ԲԱԴԵՅԱՆ՝ կողմ ----------

Դ.ՍԱՆԹՈՅԱՆ՝ կողմ ----------

Շաղիկի համայնքի ղեկավար՝ ***Ա.ԲԱԴԵՅԱՆ***

«21» դեկտեմբերի 2015թ.
գ. Շաղիկ

ՀԱՎԵԼՎԱԾ
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Շաղիկի համայնքի
ավագանու 2015 թվականի դեկտեմբերի
21-ի թիվ 13-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՇԱՂԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

№	Անվանումը	Հազար դրամ
1.	Հողի հարկ	14,7
2.	Գույքահարկ	108,5
3.	Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վճարներ	870,2
4.	Բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ	3500,0
	Ընդամենը եկամուտներ	**4493,4**

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐ

№	Հոդված	Անվանումը	Հազար դրամ
1.	4111	Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	4452,0
2.	4891	Պահուստային միջոցներ	41,4
		Ընդամենը ծախսեր	**4493,4**

Շաղիկի համայնքի ղեկավար՝ ***Ա.Բաղեյան***